«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	«Ես և շրջակա աշխարհը առարկայի դաստիարակչական նշանակությունը»
ԱՌԱՐԿԱ	Ես և շրջակա աշխարհը
ՀԵՂԻՆԱԿ	Արմենուհի Համբարձումյան
ՄԱՐԶ	Արագածոտնի մարզ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Լեռնապարի միջնակարգ դպրոց

Երևան 2022թ.

Բովանդակություն

Ներածություն 3
«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դաստիարակչական նպատակները 4
Էկոլոգիական կրթության բովանդակությունը 6
և նպատակը կրտսեր դպրոցում 6
«Ես և շրջակա աշխարհը» առարկան և դրա 8
դաստիարակչական նպատակները 8
Ինտերակտիվ մեթոդների կիրառումը դասապրոցեսի ընթացքում 10
Եզրակացություն 13
Գրականության ցանկ 14

Ներածություն

Ներկայացվող հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել տարրական դասարաններում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկային դաստիարակչական նշանակությունը և նրա կարևորությունը կրտսեր դպրոցականին՝ որպես հասարակության լիիրավ և պատասխանատու անդամ դաստիարակելու գործում:

21-րդ դարի շեմին մեր մոլորակը հայտնվել է ծայրահեղ ճգնաժամային վիճակում նյութերի, էներգիայի գերօգտագործման և տեղեկատվության ոչ խելամիտ կիրառման հետևանքով:
Էկոլոգիական կրթությունը այսօր մեր երկրում նույնպես պետք է համարվի կրթության մեջ գերակա ուղղություն քանի որ Հայաստանի Հանրապետությունը չի կարելի համարել էկոլոգիապես բարվոք միջավայր. մշակովի հողատարածքները ենթարկվում են աղակալման, կրճատվում են անտառային մակերեսները, ավելանում է Կարմիր գրքում ընդգրկվող բուսական և կենդանական տեսակների թիվը: Այդպիսի վիճակը թելադրում է Հայաստանում էկոլագիական կրթության կարևորությունը:

Թեման արդիական է նրանով, որ այսօր կարևոր է մարդու մեջ հայրենի բնության և շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար վերաբերմունքի դաստիարակումը, քանի որ բնությունը մարդու համար մեծ հարստություն է, սակայն միաժամանակ պահանջում է իր հանդեպ հոգատար վերաբերմունք: Այս ամենը կատարելու համար մարդ պետք է առաջին հերթին ունենա իրեն շևջապատող աշխարհի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ, որոնց հիմքերը դրվում են դպրոցում:

Երեխան էկոլոգիական կրթություն է ստանում դեռևս տարրական դասարաններում: Հենց այստեղ է, որ նրան օգնության է գալիս «Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացը, որի նպատակն է օգնել երեխային ճանաչել իրեն ոչ միայն որպես անհատ, այլև որպես իրեն շրջապատող աշխարհի մի մասնիկ: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը: Այսպիսով, երեխան ծանոթանում է շրջակա աշխարհի հետ, որի շնորհիվ էլ ընդլայնվում են աշխարհի մասին ունեցած նրա պատկերացումները:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դաստիարակչական նպատակները

Մարդկությունը դեռևս չի կարողանում ընկալել Էկոլոգիական գլոբալ ճգնաժամը իր ողջ խորությամբ: Սակայն Երկիր մոլորակի այդ աղետալի վիճակը պահանջում է «մարդ – բնություն - հասարակություն» փոխազդեցության խորը իմացություն, բնության օրենքների և օրինաչափությունների ճանաչողություն:

Մարդը իր էությամբ կենսասոցիալական էակ է և գտնվում է էկոլոգիական բարդ փոխհարաբերությունների համակարգի կենտրոնում:

Էկոլոգիական դաստիարակության խնդիրները բարդ են ու բազմաբովանդակ, դրանից շատերը դեռևս հստակեցված չեն և լրացուցիչ հետազոտությունների կարիք են զգում:

20-րդ դարում մեծացավ մարդու ազդեցությունը բնության վրա, և «էկոլոգիա» հասկացությունը ձեռք բերեց ավելի յուրատեսակ նշանակություն՝ որպես հիմք ընդունելով բնության ռացիոնալ օգտագործումը և կենդանի օրգանիզմների պահպանումը:

Էկոլոգիական կրթության ու դաստիարակության նպատակի միանշանակ ու համընդհանուր սահմանում չկա. մի դեպքում նպատակ ասելով հասկանում ենք էկոլոգիապես գրագետ մարդու ձևավորումը, մյուս դեպքում՝ բնության նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ձևավորումը, երրորդում՝ էկոլոգիական գիտակցության և կուլտուրայի ձևավորումը և այլն:

Էկոլոգիական կուլտուրա ասելով հասկանում ենք շրջակա միջավայրի հանդեպ ունեցած գիտելիքները, էկոլոգիական գիտակցությունը և վարքագիծը, որոնք անհրաժեշտ է շրջակա միջավայրի պահպանման և բարելավման համար:

Մարդը բնության մի մասնիկն է, այս գաղափարը պետք է հասցնել երեխայի գիտակցությանը, որպեսզի նա առաջին հերթին գիտակցի նաև իր տեղը բնության մեջ՝ որպես նրա կառուցվածքային մաս :

Հայրենասեր լինելու համար նախ մարդը պետք է ճանաչի հայրենիքը, իսկ այդ հայրենիքը ճանաչելու առաջին քայլը բնաճանաչությունն է.

Այսօր «մարդ – բնություն - հասարակություն» փոխազդեցությունը նոր խնդիրներ է դնում դպրոցի և մանկավարժական գիտության առջև: Պետք է դպրոցականներին սովորեցնել, որ մարդը ամուր կապված է բնության հետ: Հատուկ տեղ է զբաղեցնում դպրոցականների անմիջական շփումը բնության հետ, բնության մեջ գտնվելու ժամանակ ճիշտ վարքի հմտությունների տիրապետումը, ուսուցումը բնապահպանական աշխատանքների հետ զուգակցելու կարողությունը:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի բովանդակությունը հիմնականում կառուցվում է «ես» գաղափարի շուրջ: Այն մարդուն օգնում է գաղափար կազմել այնպիսի կարևոր հարցերի մասին, ինչպիսիք են

- ✓ «Ով եմ ես»՝ իր մեջ ներառում է

1. ինքնության և ինքնաճանաչման հարցեր
2. անվտանգության հարցեր՝ առողջ սնունդ, վնասակար սովորություններ, հիգիենա, անվտանգ երթևեկություն և այլն.

- ✓ «Ես և մյուսները»՝ իր մեջ ներառում է
  1. իմ ընտանիքը
  2. իմ համայնքը
  3. իմ դպրոցը
- ✓ «Ես և բնությունը»՝ իր մեջ ներառում է
  1. բույսերի ու կենդանիների խնամք
  2. բնական բազմազանություն
- ✓ «Ես և տիեզերքը»
  1. տիեզերքը
  2. երկնային մարմինները

Առարկայի դասավանդման նպատակն է սովորողի մոտ ձևավորել և զարգացնել շրջապատող միջավայրի հանդեպ ուշադիր լինելու, այն խնամելու, պահպանելու և պաշտպանելու հմտություններ: Այն սովորողի մոտ ձևավորում է նաև այլոց հետ արդյունավետ հաղորդակցվելու, մարդկային փոխհարաբերություններ ստեղծելու, արդյունավետ համագործակցելու և պատասխանատու վարքագիծ դրսևորելու կարողություններ: Արդյունքում սովորողը կհասկանա ինչպես ճիշտ օգտվել բնությունից, արդյունավետ և խնայողաբար օգտագործել բնական ռեսուրսները, մշակել հողը, հոգ տանել շրջակա միջավայրի՝ բույսերի ու կենդանիների մասին, գիտակցել իր տեղն ու դերը տվյալ միջավայրում, ինչպես նաև կառուցել ճիշտ փոխհարաբերություններ այլոց հետ՝ դրսևորելով պատասխանատու վարք:

Էկոլոգիական կրթության բովանդակությունը
և նպատակը կրտսեր դպրոցում

«Բնական գիտություններ» ուսումնական բնագավառի հիմնական նպատակն է բնության երևույթները, օրինաչափություններն ու օրենքներն իմացող, ճանաչողության մեթոդների տիրապետող և գործնականում կիրառող բնության ներդաշնակությունը գիտակցող, գիտական աշխարհայացք ունեցող անձի ձևավորումը:

Տարրական դպրոցն ավարտողը պետք է նախնական պատկերացում ունենա կենդանի և անկենդանի մարմինների առանձնահատկությունների, դրանց փոխազդեցությունների, ինչպես նաև մարդու օրգանիզմի մասին, տարրական գաղափար ունենա շարժման, ջերմության, լույսի, ձայնի մասին, ճանաչի իր շրջապատում տարածված կենդանիները, բույսերն ու սնկերը, գիտելիքներ ունենա մարդու և շրջակա միջավայրի և իր կյանքում բնական դերի մասին:

Էկոլոգիական կրթության ծրագրի հիմնական բաղադրիչներն են.

- Շրջակա աշխարհի ճանաչումը (արտաքին աշխարհ),
- Ինքնաճանաչումը (ներաշխարհ):

Ժամանակակից մարդուն կենսականորեն անհրաժեշտ են պատկերացում ունենալ ինչպես մաթեմատիկայի, ֆիզիկայի, պատմության և դպրոցական այլ առարկաների, այնպես էլ էկոլոգիայի, էկոհամակարգերի, էկոհամակարգերում մարդու տեղի ու դերի, բնության պահպանության և վերարտադրման անհրաժեշտության մասին:

Կրտսեր դպրոցականների էկոլոգիական կրթության **նպատակը** էկոլոգիական մտածողության տարրական հենքի ձևավորումն է, որը պարզ գիտելիքների՝ բնության օրենքների, էկոլոգիական հասկացությունների, բնության մեջ իր տեղի գիտակցման, բնության նկատմամբ պատասխանատվության նորմերի յուրացման, էկոլոգիական մշակույթի և գործունեության հմտություններ ձևավորման գործընթացն է:

Էկոլոգիական կրթության գործընթացը կարող է ներառել՝

1. *Հենքային դասընթացը*: Նախադպրոցական հաստատություններում և տարրական դասարաններում էկոլոգիական տարրական գիտելիքներ տալու համար ստեղծվել է էկոլոգիական այբբենարան, որի նպատակն է երեխային ծանոթացնել անկենդան բնության, բույսերի, կենդանիների տեսակներին և նրանց յուրահատկություններին:
2. *Նախասիրական պարապմունքները*, որոնց բովանդակությունը որոշվում է՝ հաշվի առնելով սովորողների և նրանց ծնողների հետաքրքրությունները և պահանջմունքները:
3. *Արտաուսումնական պարապմունքները*՝ տարրական դասարաններում էկոլոգիական թեմաներով զարգացնող խաղերն ու էքսկուրսիաներն են :
4. *Էկոլոգիական և բնապահպանական թեմաներով միջոցառումներ*:

Բնության ուսումնասիրությունը տարրական դասարաններում պետք է սկսել էքսկուրսիաներից և շարունակել դասերի ու արտադասարանական միջոցառումների ժամանակ: Այստեղ երեխան սովորում է բնության մեջ վարքի տարրական կանոններ:

Անհրաժեշտ է որքան հնարավոր է, դասերն անցկացնել բնության գրկում, այդ պարագայում դրանք ցուցադրական որոնողական բնույթ կկրեն:

Այս նպատակով մշակվել են մի շարք ծրագրեր, ստեղծվել ձեռնարկներ՝ «Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը» և «էկոլոգիական այբբենարան» ուսումնական ձեռնարկները, տպագրվել է «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի ծրագիրը և ձեռնարկը:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան և դրա դաստիարակչական նպատակները

«Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկայի դասավանդումը պարտադիր է 2-4-րդ դասարանների համար:

Շրջակա միջավայրի, կենդանի և անկենդան բնության, մարդու, Երկիր մոլորակի՝ որպես մարդկության տան, ուսումնասիրությունը անհրաժեշտ է իրականացնել՝

- սովորողի շրջապատում (տուն, բնակավայր,) դիտվող բնության տարրերի և երևույթների դիտարկումների, պարզունակ փորձերի միջոցով
- սովորողի կողմից սեփական օրգանիզմը ճանաչելուն, առողջության պահպանմանը և անվտանգ կենսագործունեություն ծավալելուն ուղղված ուսումնական գործունեության օգնությամբ
- իր շրջապատը հետազոտելով և դրա վերաբերյալ ինքնուրույն եզրահանգումներ կատարելով
- Հայաստանի բնության բազմազանության, բնական ու հասարակական օբյեկտների ու երևույթների վերաբերյալ տարրական գիտելիքներ ձևավորելով
- մայրցամաքների հայտնագործման ու հետազոտության մասին պատմությունների միջոցով:

7-10 տարեկան հասակը լավագույն տարիքն է համագործակցության, փոխըմբռնման, մարդու իրավունքների հիմնախնդիրները հասկանալու համար:

«Ես և շրջակա աշխարհը» ինտեգրված դասընթացի հիմնական նպատակն է օգնել երեխային ճանաչել իրեն և՛ որպես անհատ, և՛ որպես հասարակության մասնիկ: Դասընթացի օգնությամբ կրտսեր դպրոցականը սկսում է «կառուցել» իր սեփական աշխարհը՝ գծելով իր պատկերացումների, զգացողությունների, մտքերի ու նախասիրությունների շրջանակը: Դասընթացի թեմաներն ընտրված են այնպես, որ աշակերտի մեջ քայլ առ քայլ ձևավորվի այն գիտակցությունը, որ ինքը շրջապատող աշխարհի մի մասն է, որ իր անձից այն կողմ կան ուրիշ մարդիկ ևս, որոնք, ինչպես ինքը, առանձին անհատականություն են, և արժանի են հարգանքի:

Կրտսեր դպրոցականի պատկերացումները ընդլայնվում են շրջակա աշխարհի հետ ծանոթացման շնորհիվ: Երեխաներն ուսումնասիրում են իրենց բակը, բնակավայրը, մարզը, հայրենիքը, նրա ներկան և անցյալը, պատմամշակութային արժեքները, ծանոթանում են տարբեր մարդկանց, սովորում են հասարակական վայրերում օրինակելի վարքագիծ դրսևորել, ձեռք են բերում հաղորդակցական հմտություններ, առողջ ապրելակերպի համար անհրաժեշտ կարողություններ: Այս դասընթացի բոլոր թեմաների ուսումնասիրության ժամանակ կարևոր է ապահովել բազմաբնույթ գործնական աշխատանքների կիրառումը:

«Ես և շրջակա աշխարհը» դասընթացի ծրագրի հենքային բովանդակությունը կազմված է հետևյալ բաժիններից՝

- «Ես »ի աշխարհ
- Մարդկանց աշխարհ
- Բնության աշխարհ
- Իրերի աշխարհ
- Երազանքների աշխարհ

Այստեղ ուսուցչի դերը շատ էական է, քանի որ նա հստակ պետք է իմանա իր անելիքները, դասերն անցկացնի կրտսեր դպրոցականի համար հնարավորինս օգտակար: Շատ կարևոր է սովորողներին ծանոթացնել իրենց շրջապատող աշխարհին, մարդկային հարաբերություններին: Ուսուցիչը պետք է սովորողներին ծանոթացնի իրենց օրգանիզմի, շրջապատի, կենդանի և անկենդան մարմինների, և բնության հետ:

Միայն այս ամենին տիրապետելուց հետո սովորողը գաղափար կկազմի բնության մեջ գոյություն ունեցող հարաբերությունների մասին, և թե ինչ դեր ունի ինքը այդ բնության մեջ:

«Ես և շրջակա աշխարհը»առարկայի դասավանդման հիմնական նպատակներն են.

- սովորողներին ծանոթացնել իրենց շրջապատող աշխարհին, այնտեղ կատարվող բնական-հասարակական երևույթներին ու օբյեկտներին, մարդկային հարաբերություններին,
- ծանոթացնել սեփական օրգանիզմի հետ, ներկայացնել օրգանիզմի խնամքի և հիգիենայի հիմնական կանոնները,
- սովորեցնել ճիշտ հաղորդակցվել և համագործակցել մարդկանց հետ,
- նպաստել նրան, որ սովորողը ունենա արժանապատվության զգացում և հանդուրժողականություն շրջապատի նկատմամբ,
- սովորողի մոտ ձևավորել ինքնուրույն որոշումներ կայացնելուկարողություն
- զարգացնել սեփական արարքների համար պատասխանատու լինելու գիտակցություն
- սովորողի մոտ ձևավորել ինքնադրսևորման ու ինքնարտահայտման հմտություններ
- ձևավորել առողջ ապրելակերպին նպաստող վարքագիծ,
- զարգացնել բնության հանդեպ հոգատար վերաբերմունքի անհրաժեշտության գիտակցում,
- նպաստել սեփական երկրի պատմամշակութային արժեքների ժառանգորդը լինելու գիտակցմանը:

Յուրաքանչյուր դասարանի համար գոյություն ունեն առարկայի բովանդակության մաս կազմող պարտադիր բաղադրիչներ, որոնց ուսուցիչը պետք է մեծ ուշադրություն դարձնի:

Ինտերակտիվ մեթոդների կիրառումը դասապրոցեսի ընթացքում

«Ես և շրջակա աշխարը» առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է կիրառել գործունեության զանազան ձևեր, ինչպես օրինակ:

- ✓ խաղային մեթոդներ
- ✓ աշխատանք գլուխկոտրուկներով, խաչբառերով և հանելուկներով
- ✓ արտադասարանական դիտումներ և փորձեր
- ✓ մրցույթներ
- ✓ ուսուցողական կարճ ֆիլմերի ու տեսանյութերի դիտումներ և քննարկումներ
- ✓ ուսուցողական տեսանյութերի պատրաստում
- ✓ խմբային աշխատանքներ
- ✓ արշավներ և էքսկուրսիաներ
- ✓ թեմատիկ քննարկումներ

«Ինտերակտիվ» նշանակում է փոխազդող, փոխներգործող: Ինտերակտիվ դասը փոխգործակցություն է ուսուցչի և սովորողի ինչպես նաև տարբեր սովորողների միջև: Ինտերակտիվ մեթոդների կիրառման ժամանակ ուսուցչի ակտիվությունն իր տեղն է զիջում սովորողների ակտիվությանը: Սովորողները ունկնդրողներից վերածվում են ակտիվ մասնակիցների: Այն խթանում է սովորողների ինքնուրույն աշխատանքին: Այս դեպքում ուսուցիչը հանդես է գալիս որպես կազմակերպչի, խորհրդատուի օգնողի դերերում:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդման ընթացքում առավել արդյունավետ ինտերակտիվ մեթոդներից են՝

- ✓ նախագծային մեթոդը որը նպաստում է սովորողների ինքնուրույն աշխատանքի և ստեղծագործական կարողությունների զարգացմանը
- ✓ բանավեճը, որը իրենից ենթադրում է մասնակիցների հավասարություն
- ✓ զույգերով աշխատանք, որը հատկապես առաջին և երկրորդ դասարաններում խթանում է սովորողների միջև միջանձնային հարաբերությունների ձևավորմանը
- ✓ խմբային աշխատանքը, որի ընթացքում յուրաքանչյուրն աշխատում է նախ ինքնուրույն և հետո բոլորը համախմբվում են մեկ ընդհանուր աշխատանքի շուրջը; Այստեղ սովորողներից յուրաքանչյուրը իր ուժերի ներածին չափով աշխատում է իր ներդրումը ունենալ ընդհանուր գործի մեջ: Սովորողները կատարում են գիտելիքների և մտքերի փոխանակում: Սա հնարավորություն է ընձեռնում նաև թույլ սովորողների համար, քանի որ նրանք նույնպես առանց բարդույթների ակտիվ մասնակցություն են ունենում աշխատանքին, քանի որ նրանք ստիպված չեն լինում աշխատել մի ամբողջ դասարանի հետ, այլ 5-6 հոգանոց խմբի անդամների հետ:

Փոքր խմբերում սովորողները հնարավորություն ունեն անկաշկանդ արտահայտելու իրենց տեսակետը ինչպես նաև լսել և քննարկել մյուսների կարծիքը:

Առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացման համար անգնահատելի է խաղային մեթոդների դերը, քանի որ տարրական դասարաններում շատ կարևոր է պահպանել սովորողի հետաքրքրությունը, որպեսզի առարկան նրա համար լինի հետաքրքրաշարժ: Դասընթացը բավականին բարդ է և հագեցած, ուստի պետք է այն դարձնել հնարավորինս հասանելի:

Խաղը գործողություն է, որը կատարվում է հաճույքի համար, իսկ երբեմն էլ օգտագործվում է որպես ուսուցողական գործիք: Խաղը աշխատանք չէ, սակայն խաղի և աշխատանքի միջև սահմանումը հստակ չէ, և որոշ խաղեր համարվում են աշխատանք և հակառակը: (Նալբանդյան, Ամազարյան)

Ցանկացած խաղային իրավիճակ կազմակերպելիս անհրաժեշտ է հստակ մշակել և սովորողներին ներկայացնել կանոնները:

Խաղ 1- Օրինակ 2-րդ դասարանում առարկայի «Ով եմ ես» բաժնի շրջանակում սովորողը պետք է կարողանա ներկայանալ, նկարագրել իրեն, հասկանա «տուն», «ընտանիք», «գերդաստան» բառերի իմաստը, պետք է իմանա իր հասցեն, բնակության վայրը և մի շարք այլ կարևոր տեղեկություններ: Ուստի կարելի է սովորողների համար մշակել տեղեկագիրք

Իմ անունը, ազգանունը, հայրանունը	Իմ ընտանիքը	Իմ հայրենիքը Իմ քաղաքը	Իմ հասցեն	Իմ դպրոցը, իմ դասարանը	Իմ սիրելի զբաղմունքը
					

Խաղ 2 – «Շրջակա միջավայր, բույսեր և կենդանիներ» բաժնի շրջանակում կարելի է սովորողներին նախապես տալ քարտեր որոնց վրա պատկերված են որոշակի բույսեր և կենդանիներ. Սովորողները պետք է մարմնավորեն տվյալ բույսին կամ կենդանուն՝ կատարելով նրանց ուղղված հետևյալ առաջադրանքները՝

- Կենդանիներ հավաքվեք դասարանի աջ անկյունում
- Բույսեր հավաքվեք դասարանի ձախ անկյունում
- Ընտանի կենդանիներ մեկ քայլ առաջ եկեք
- Վայրի կենդանիներ մեկ քայլ հետ գնացեք

- Վայրի բույսեր ձեռքերը վեր բարձրացրեք
- Մշակովի բույսեր ձեռքերը դրեք կոնքերին ...

Հրահանգների շարքը շարունակել՝ ընդհանուրից գնալով մասնավորը, մինչև որ մասնակցող յուրաքանչյուր բույս կամ կենդանի հասկանա իր առանձնահատկությունն ու մյուսներից ունեցած տարբերությունները:

Եզրակացություն

Ժամանակակից աշխարհում ապրելու, որպես անձ և հասարակության լիիրավ, պատասխանատու և գիտակից անձ լինելու համար մարդուն անհրաժեշտ է պատկերացում ունենալ ոչ միայն մաթեմատիկայի, պատմության, քիմիայի և դպրոցական այլ առարկաների մասին, այլև բնության, դրա պահպանության և այնտեղ մարդու տեղի ու դերի մասին: Երեխան այս ամենի հետ պետք է ծանոթանա որքան հնարավոր է շուտ, քանի որ միայն դա կօգնի նրան ճիշտ և առողջ հարաբերությունները ձևավորել շրջակա միջավայրի հետ :

Կրտսեր դպրոցականների մոտ շրջակա միջավայրի նկատմամբ դրական վերաբերմունքի ձևավորման առումով անգնահատելի է տարրական դասարաններում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դերը. Այն սովորողին օգնում է ձեռք բերել կենսական գիտելիքներ շրջակա միջավայրի, դրա ճանաչման, ուսումնասիրման և պահպանման և այդ միջավայրում նրա ունեցած կարևոր դերի մասին:

Առարկան իր բնույթով ինտեգրված է ուստի սովորողներին հնարավորություն է ընձեռնվում գաղափար կազմել մի շարք այլ առարկաների մասին նույնպես: Արդյունքում աշակերտները ձեռք են բերում նախնական գիտելիքներ Բնություն, Կենսաբանություն, Աշխարհագրություն, Առողջ ապրելակերպ, Պատմություն, Հասարակագիտություն առարկաներից:

Առարկան հնարավորություն է ընձեռնում կիրառել դասավանդման նորարարական և ինտերակտիվ մեթոդներ՝ դասավանդման արդյունավետության բարձրացման նպատակով:

Դասընթացը հնարավոր է անցկացնել նաև բնության գրկում, ինչը գործնական ավելի մեծ հնարավորություններ է ընձեռում: Այդ իսկ պատճառով տարրական դասարաններում դասավանդվող «Ես և շրջակա աշխարհը» առարկան լայն հնարավորություններ է ընձեռում ոչ միայն սովորողներին այլև ուսուցիչներին:

Գրականության ցանկ

1. *Հանրակրթության պետական չափորոշիչ*, 2010:
2. Ալեքսանյան Լ., Թորոսյան Ն. և ուրիշներ, *Կյանքի հմտություններ, Ձեռնարկներ ուսուցիչների համար*, 1-5-րդ դասարաններ, 2001-2003:
3. Դավթյան Մ. և ուրիշներ, *Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ*, Այոեքս, Երևան, 2004:
4. *Ինտեգրված թեմատիկ միավորներ, Ձեռնարկ տարրական դպրոցի ուսուցիչների պատրաստման ու վերապատրաստման համար*, Երևան, 2003.
5. Նալբանդյան , Ամազարյան, Խաղի մեթոդի կիրառումը «Ես և շրջակա աշխարհը» դասընթացին
6. Աստվածատրյան Մ. և ուրիշներ, *Ուսուցիչների վերապատրաստման գործընթացի կատարելագործումը*, Ձեռնարկ ուսուցիչների համար, Այոեքս, Երևան, 2003.
7. Փ.Ա. Սարգսյան, Լ.Թ. Ասատրյան , *Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների էկոլոգիական կրթությունն ու դաստիարակությունը*, Երևան, 2002թ.
8. Յու.Ա. Ամիրջանյան,Ա. Ա. Սահակյան, *Մանկավարժություն*, Երևան, 2005թ.
9. http://curricula-depot.gei.de